



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

338.98  
4-82

51



338.98  
4-89

Լ. ԿՈՒՅՔԻՇԵՎ


175

ԱՀ

# ՀՆԳԱՄՑԱԿԻ

ՅԵՐԿՈՒ ՏԱՐՎԱ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԽՍՀՄ ԺՈՂՈՎՌՈՒԹ, ԿԵՆՏՐ, ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՄՈԽԿՎԱ.



1931

32002

338.98

4-82

95

ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԱՋԻՆ ՅԵՐԿՈՒ  
ՏԱՐՎԱ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

(ԽՍՀՄ-յան ժողկոմիսորհինախագահի տեղակալ  
ԽՍՀՄ Պետպլանի նախագահի ընկ. Վ. Կույբիշևի  
տված՝ տեղեկությունը ամերիկական «Ասսոցիյ-  
տեդ-Պրեսս» հեռագրական գործակալությանը):

Հոկտեմբերի 1-ին լրացավ հնգամյակի յերկ-  
րորդ տարին, այն հնգամյակի, վորը վրդո-  
վեց ամբողջ աշխարհի մտքերը, վորի առթիվ  
ամբողջ աշխարհի մամուլի եջերում տարվեց  
և տարվում ե մինչև այժմ ամենախիստ դիս-  
կուսսիա:

Ո՞վ չի հիշում բուրժուական խոշորագույն  
տնտեսագետների և քաղաքագետների առա-  
ջադրած այն պնդումները, թե հնգամյա պլանի  
նախագծումները ուալ չեն, ուտոպիկ են,  
Փանտաստիկական։ Ո՞վ չի հիշում այն հայ-

12681.52

Թարգմ. Ա. Հ.

տարարությունները, թե հնգամյա պլանի նախագծումները հերթական բոյլշիկական ցնորքներ են, Մինչև որս ել աղաղակում են հնգամյակի տապալման մասին, Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության վերակառուցման լայնորեն մտածված պլանի վիճման մասին:

Հնգամյա պլանի գործողության անցած յերկու տարիները բավարար նյութ են տալիս թե հնգամյա պլանի նախագծումների ռեալականությունը ստուգելու և թե ստուգելու այն առարկությունների և կասկածների հիմնավորությունը, վորոնք առաջացրեց այդ պլանը բուրժուական-տնտեսագիտական մտքի ներկայացուցիչների կողմից:

Անցյալ յերկու տարիները արտաքերեցին հնգամյակի առաջադրանքների գերակատարումը ժողովրդական տնտեսության կարենուագույն ճյուղերում: Պլանավորվող արդյունաբերության մեջ յերկու տարիների համար միասին հնգամյակը յենթադրում եր արտա-

դրանքը անփոփոխ գներով 29.338 մլն. ռուբ. չափով, իսկ փաստորեն նա հասավ 30.456 մլն. ռուբլու: Հնգամյակի գերակատարումը յերկու տարվա ընթացքում առանձնապես խոշոր ե ծանր ինդուստրիայի արտադրանքի բնագավառում: Հնգամյակի առաջադրանքն եր այդ յերկու տարիների համար 12.476 մլն. ռուբ., իսկ կատարված ե 13.764 մլն. ռուբ. արտադրանք: Ծանր ինդուստրիայի առանձին ճյուղերում հնգամյակի գերակատարումը յերկու տարում կազմել ե՝ նավթի վերաբերմամբ — հնգամյակով յենթադրված եր 28 մլն. տոնն, իսկ հասավ 30,6 մլն. տոննի, պողպատի վերաբերմամբ — 9,9 մլն. տոնն ըստ հնգամյակի և 10,2 փաստորեն. պրոկատի մեջ — հնգամյակով յենթադրված եր 7,6 մլն. տոնն, փաստորեն հասավ 8,3 մլն. տոննի, ելեկտրոտեխնիկայի մեջ — հնգամյակով յենթադրված եր արտադրանք 588 մլն. ռուբ. չափով, իսկ հասավ 781 մլն. ռուբ., գյուղատնտեսական մեքենակառուցման մեջ —

հնդամյակով յենթադրված եր 472 մլն. ռուբ.  
արտադրանք, իսկ փաստորեն հասավ 515 մլն.  
ռուբրու։ Գերակատարումը տեղի յե ունեցել  
յերկու տարվա ընթացքում նույնպես և ընդ-  
հանուր մեջենակառուցման մեջ։

Թեև արդեն իսկ առաջին տարում հնդա-  
մյակը գերակատարված եր, բայց առանձնա-  
պես խոշոր եյին սոցիալիստական արդյունա-  
բերության հաջողությունները հնդամյակի  
յերկրորդ տարում. ընդհանուր արտադրանքի  
աճումը 1929—30 թ. կազմեց 25 տոկոս,  
գերազանցելով հնդամյակի նախագծումներից  
5 տոկոսով։ Յեզ վոր անհրաժեշտ ե առանձ-  
նապես ընդգծել, արտադրության միջոցներ  
արտադրող ճյուղերի արտադրանքի աճումը  
հասավ անցյալ տարում 40 տոկոսի և դրա-  
նով իսկ գերազանցեց հնդամյակի նախա-  
գծումներից այդ տարվա համար 16 տոկո-  
սով։ Արդյունաբերության կարևորագույն  
ճյուղերում հնդամյա պլանի նախագծումների  
և նրանց իրականացման հարաբերականու-

թյունը պատկերանում ե այսպես՝ — նավթի  
արտադրանքը գերազանցել ե հնդամյա պլանի  
1929—30 թ. առաջադրանքը 17,1 տոկո-  
սով. պողպատի հալելը գերազանցել ե հըն-  
դամյակը 6,7 տոկոսով, իսկ պողպատը —  
12 տոկոսով. մետաղամշակման և մեջենա-  
կառուցային արդյունաբերության արտա-  
դրանքը գերազանցել ե հնդամյա պլանի նա-  
խագծումները 1929—30 թ. համար 26,3 տո-  
կոսով։ Ելեկտրոտեխնիկական արդյունաբե-  
րության արտադրանքը գերազանցել ե հըն-  
դամյա պլանի նախագծումները 39 տոկոսով  
և այն։ Կարճ ասած, արդյունաբերության  
կարևորագույն ճյուղերի մեջ մենք ընթանում  
ենք հնդամյա պլանի նախագծումների խոշոր  
գերակատարման ուղիյով։

Աճման ավելի համեստ տեմպեր ունենք մենք  
թեթև արդյունաբերության ճյուղերի մեջ,  
ուր սահման դնող հանդամանքն ե գյուղա-  
տնտեսական հումույթը։ Հայրենական հու-  
մույթային բազայի առաջքաշումը հնարավո-

բություն ե տալիս գալիք տարում զգալի  
չափերով գերակատարելու հնգամյա պլանի  
նախագծումները նաև թեթև արդյունաբերու-  
թյան մեջ (սննդային արդյունաբերություն,  
բամբակա-թղթային և այլն):

Ընդհանուր առմամբ արդյունաբերության  
մեջ, հնգամյա պլանի նախագծումների գե-  
րակատարումով, արդյունաբերական արտա-  
դրության նախապատերազմական մակար-  
դակը գերազանցված ե յերկու անգամ:

Հնգամյա պլանի նախագծումներից խոշոր  
չափով բարձր եր նաև արդյունաբերական  
շինարարության ծրագրի իրագործումը: Մաս-  
շտակապես, ժողովրդական Տնտեսության  
Գերագույն Խորհրդի կողմից պլանավորվող  
արդյունաբերության մեջ շինարարական ծրա-  
գիրը հնգամյակի առաջին յերկու տարինե-  
րին իրագործված ե 4.605 մլն. ռուբլու չա-  
փով փոխանակ հնգամյա պլանով նախագծված  
3.990 մլն. ռ.: Յեթե շինարարական ծրագրի  
իրագործումը հնգամյակի առաջին տարում

կտնվում եր հիմնականում հնգամյակի մա-  
կարդակի վրա, գերազանցելով այն աննշան  
չափերով, ապա յերկրորդ տարում, այսինքն  
1929 — 30 թ. հնգամյակի առաջադրանքը  
խիստ գերակատարվեց՝ փոխանակ հնգա-  
մյակով այդ տարվա համար նախագծված  
2.331 մլն. ռուբ., փաստորեն արդյունաբե-  
րության շինարարական ծրագրի իրագոր-  
ծումը հասավ 2.965 մլն. ռուբ., այսինքն  
27 տոկոսով ավելի, քան նախագծված եր  
հնգամյակով:

Հնգամյակով ընդգծված ֆաբրիկա-գործա-  
րանային շինարարության պլանի այսքան  
խոշոր գերակատարումը ապահովում ե ար-  
դյունաբերական զարգացման տեմպերի հե-  
տագա արագացումը և միանգամյան իրական  
ե դարձնում «հնգամյակը չորս տարում»  
լողունդի իրականացումը, իսկ արդյունաբե-  
րության մի շարք կարևորագույն ճյուղերի  
մեջ — 3 —  $3\frac{1}{2}$  տարում (ածուխ, մեքենա-  
կառուցում, նավթ և այլն):

Շատ խոշոր են մեր հաջողությունները  
նաև գյուղատնտեսության մեջ։ Ցանքսերի  
տարածությունը 1928—29 թ. 118 մլն.  
հեկտարից հասավ 1929—30 թ. 127,7 մլն.  
հեկտարի։ Ինտենսիվ մշակույթների վերա-  
բերմամբ ցանքսերի տարածությունները շատ  
ավելի բարձր չափերի հասան, քան նախա-  
գծված եր հնգամյակով՝ — շաքարի ճակըն-  
դեղի — 11,1 տոկոսով, բամբակի — 23 տո-  
կոսով և այլն։ Հողի բարելավված մշակումը,  
մանավանդ կոլխոզներում և սովխոզներում,  
և դրա հետևանքով բերքատվության աճումը  
հասցըին նրան, վոր հացահատիկների ընդ-  
հանուր բերքը 1930 թ. կազմեց 86,5 մլն.  
տոնն 1929 թ. 71,7 մլն. տոննի հանդեպ,  
այսինքն, 20,6 տոկոսով ավելի, իսկ հատի-  
կային մշակույթների ապրանքային արտա-  
դրանքը 32,6 տոկոսով գերազանցեց հըն-  
դամյա պլանի նախագծումները։ Այդպիսով,  
հացահատիկային պրոբլեմը հիմնականում  
լուծված եւ։

Այդ խոշորագույն հաջողությունները ուղ-  
ղակի հետևանք են այն մեծագույն հաջողու-  
թյունների, վոր մենք ունեցանք կոլխոզա-  
յին և սովխոզային շինարարության բնագա-  
վառում։

Յեթե վերցնենք բոլոր գյուղացիական  
տնտեսությունները (հացահատիկային, տեխ-  
նիկական կուլտուրաների, անասնապահու-  
թյան, ձկնորսության, անտառային, վորսի  
և այլն), ապա մինչև 1930 թ. հոկտեմբերի  
1-ը կոլեկտիվ տնտեսությունների մեջ եր  
ներգրավված գյուղացիական բոլոր տնտե-  
սությունների  $\frac{1}{5}$ -ից ավելին (21,5 տոկոս)։  
Ավելի քան 5 միլիոն գյուղացիական տնտե-  
սություններ հրաժարվեցին տնտեսության  
անհատական ձևերից և անցան կոլեկտիվ  
ձևերին, համոզվելով գործնականում տնտե-  
սության այդ նոր ձևերի առավելությունների մեջ։ Կոլխոզները անցյալ տարում ցա-  
նել են 36 մլն. հեկտար փոխանակ այն  
20,6 մլն. հեկտարին, վորոնք նախագծված

Եյին հնգամյա պլանով հնգամյակի վերջին վճռական մոմենտ ե հանդիսանում այս դեպքում այն, վոր կոլեկտիվացման մակարդակը հիմնական արտադրող հացահատիկային շրջաններում (Հյուսիսային Կովկաս, Ներքին Վոլգա, Միջին Վոլգա և Ուկրայնա) նույն ժամկետին հասավ 43,8 տոկոսի: Իսկ յեթե ավելացնենք դրան խորհրդային պետական հացահատիկային տնտեսությունների (սովխոզներ) աճումը, վորոնց ցանքսերի տարածությունը 6 մլն. հեկտարից ավելի յե, համայնացված սեկտորի տեսակարար կշիռ ավելի ևս խոշոր ե դառնում:

Դրա շնորհիվ արդեն իսկ ընթացիկ տարում համայնացված սեկտորի (կոլխոզներ և սովխոզներ) բաժինը հացահատիկների ապրանքային արտադրանքի մեջ կազմում ե 50 տոկոսից ավելին հնգամյակի վերջին տարվա համար յենթադրված 43 տոկոսի փոխարեն:

Դրա հետ միասին խոշոր չափերով աճեց նաև անասունների համայնացումը, թէ բա-

նոր և թէ մթերատու: Համայնացված սեկտորի տեսակարար կշիռն եր կազմում 1928 թ. բանող ձիյերի վերաբերմամբ 0,9 տոկոս, 1929 թ. — 1,8 տոկոս: Իսկ 1930 թ. — 18 տոկոս. կովերի վերաբերմամբ նույն թվերին համապատասխան — 0,4, 0,9 և 7,3: Հնգամյակի հենց յերկրորդ տարին ցուցադրեց համայնացրած սեկտորի խիստ աճումը անասունների նկատմամբ և այդ հանգամանքը խոչոր անասնապահական սովխոզների կազմակերպության հետ միասին (կաթնատու անասուն, խոզաբուծություն, վոչխարաբուծություն և այլն) ռելսերի վրա յե դնում անասնապահության պրոբլեմը ևս:

Անասնապահության պրոբլեմը կլուծվի նույն ուղիներով, ինչպես և հացահատիկային պրոբլեմը, և այն ել ամենակարճ ժամկետում (մեկ — յերկու տարի):

Կոլխոզային շինարարության աճման մեջ փայլուն կերպով հաստատվեց այն քաղաքականության ձշտությունը, վորը վարել ե

և վարում ե ԽՍՀՄ-յունը գյուղացիության  
վերաբերմամբ։ Լիկվիդացիայի յենթարկելով  
կուլակությունը իբրև դասակարգ, հենվելով  
կոլտողնիկների — Խորհրդային իշխանության  
այդ հաստատ նեցուկի վրա գյուղում, խոր-  
հրդային պետությունը հաստատ ու համոզ-  
ված տանում ե չքավոր-միջակային անհա-  
տական գյուղացիական տնտեսությունը գեպի  
հողագործության սոցիալիստական ձևերը։  
Յեվ այստեղ խոշորագույն դեր ե խաղում  
գյուղատնտեսության տեխնիկական բաղայի  
բարձրացումը և վերակառուցումը։ Դորձող  
գյուղատնտեսական մեքենաների արժեքը  
աճել ե մի տարվա ընթացքում 1,400 մլն.  
ռուբլ. մինչև 1,700 մլն. ռուբլու։ Տրակ-  
տորների ուժը հասել ե 1,022 հազար ձիու  
ուժի փոխանակ հնգամյակով նախագծված  
560 հազար ձիու ուժի։

Արդյունաբերության և գյուղատնտեսու-  
թյան փոթորկավի աճումը բարձր պահանջներ  
ներկայացրեց տրանսպորտի աշխատանքին,

առանձնապես յերկաթուղային տրանսպորտի։  
Հնգամյակով — յերկաթուղային տրանսպորտը  
հնգամյակի առաջին յերկու տարիներում  
պետք ե փոխադրել 350,9 մլն. տոնն ապ-  
րանք, իսկ փաստորեն փոխադրված ե  
409,2 մլն. տոնն։ Հնգամյակը յերկու տարվա  
ընթացքում գերազանցված ե նաև ուղևոր-  
ների վերաբերմամբ։ Հնգամյակով նախա-  
գծված եր իրագործել 51,5 միլիարդ ուղևորա-  
կիլոմետր, իսկ փաստորեն կատարված ե  
77,1 միլիարդ։

Արդեն հնգամյակի առաջին տարում նրա  
առաջադրանքը յերկաթուղային տրանսպորտի  
կողմից գերակատարված ե։ Սակայն տեմ-  
պերի հետագա աճումը արտաքերեց հնգա-  
մյակի առաջադրանքի հատկապես խոշոր գե-  
րակատարում տրանսպորտի կողմից հնգա-  
մյակի յերկրորդ տարում, այսինքն 1929 —  
30 թ.։ Յերկաթուղային տրանսպորտի ապ-  
րանքաշրջանառությունը 1929 — 30 թվին  
հասավ 233,5 մլն. տոննի, ավելի քան  $\frac{1}{3}$ -ով

գերազանցելով նախընթաց տարին և 25,6 տու-  
կոսով — հնգամյա պլանի նախագծումների  
յերկորդ տարվա համար։ Նույնպիսի հե-  
տևանքներ ե տվել և ուղղորդների շար-  
ժումը՝ մի տարվա ընթացքում փոխա-  
դրված ե 508,5 մլն. մարդ, անցնելով 47,4 մի-  
լիարդ ուղղորդակիլոմետր, մինչդեռ հնգամյա  
պլանով նախագծված եր հնգամյակի վերջին  
տարվա համար 455 մլն. ուղղորդներ և 35,4 մի-  
լիարդ ուղղորդակիլոմետր։ Հնգամյակի առա-  
ջադրանքը 1929—30 թ. համար ըստ ուղղորդա-  
կիլոմետրերի գերակատարված ե 86,6 տո-  
կոսով։ Այստեղ ևս, արանապորտում, ինչպես  
և արդյունաբերության և ժողովրդական ամ-  
բողջ տնտեսության մեջ, շինարարական  
ծրագիրը իրագործվում է ավելի մեծ չափե-  
րով, քան նախատեսնված եր հնգամյա պլա-  
նով։ Կասկած չկա, վոր ժողովրդական տնտե-  
սության շինարարական այդ ընդլայնված,  
հնգամյակի համեմատությամբ, ծրագրի իրա-  
կանացումը թույլ կտա ընդլայնելու Յեվո-

պայի և Ամերիկայի արդյունաբերության և  
ամբողջ տնտեսության մասնակցությունը  
այդ աշխատանքի մեջ։  
Իոլոր այդ խոշորագույն նվաճումները  
հնգամյա պլանի առաջադրանքների իրակա-  
նացման գործում, հանդիսանալով աշխատա-  
վորության ամենալայն մասսաների և առա-  
ջին հերթին բանվոր դասակարգի մեծագույն  
ակտիվության և աշխատանքային ենոտու-  
զիազմի արդյունքը, թույլ տվին հետագա-  
լուրջ քայլը անելու աշխատավորների նյու-  
թական-կուլտուրական դրության բարելավ-  
ման գործում։

Աշխատավորների դրության այդ բարե-  
լավումը գտավ իր արտահայտությունը նախ  
և առաջ վարձովի աշխատանքի մարդկանց քա-  
նակի աճման մեջ։ Վարձով բանող աշխատա-  
վորների ընդհանուր թիվը հասավ 1929—30 թ.  
13.684 հազար մարդու փոխանակ հնգամյա  
պլանով այս տարվա համար նախագծված  
12.793 հազարին։ Դրա հետևանքով արդեն

հնդամյակի յերկրորդ տարվա վերջում գործազրկության պրոբլեմը վերջնականապես հանվեց որակարգից, այսինքն—գործազրկություն ԽՍՀՄ-յան մեջ այլևս գործություն չունի, մինչդեռ հնդամյա պլանը նախատեսնում եր դեռևս հնդամյակի վերջին 400 հազար գործազրկությունը: Յեկ մենք այսոր ընդհուպ կանգնած ենք վորակավորված բանվորական ուժի արագացրած վերարտադրության խնդրի առաջ, վորի կարիքը և վորի պակասությունը այնքան սուր կերպով զգում ե արագորեն ինդուստրացվող յերկիրը:

Աշխատավորների դրության բարելավումը արտահայտվեց նաև 7 ժամյա բանվորական որվա անցած բանվորների թվի հետագա աճման մեջ: Յեթե հնդամյակի յերկրորդ տարվա սկզբին փոխանցված եր բանվորական ամբողջ կազմի 19,1 տոկոսը, ապա 1930 թվի հոկտեմբերի 1-ին, այսինքն հնդամյակի յերկրորդ տարվա վերջին 7 ժամյա բանվորական որվան փոխանցված ֆաբրիկա-գործարանա-

յին բանվորների ընդհանուր քանակը հասավ բանվորների ընդհանուր թվի 43,5 տոկոսին, 3,5 տոկոսով գերազանցելով հնդամյա պլանի առաջադրանքը: Այդ ապահովումն է ժամյա բանվորական որվա կիրառումը մնացած ձեռնարկությունների մեջ ավելի կարճ ժամկետում, քան նախատեսնաված ե հնդամյակով: Աշխատավորների դրության այդ ընդհանուր բարելավմանը ուղեկցում եր շահատավարձի հետագա աճումը: Հնդամյակի առաջի յերկու տարիներում աշխատավարձը աճել է միջին հաշվով մեկ բանվորի վրա 12,1 տոկոսով: Այդպիսով, ժողովրդական տնտեսության աճման ավելի ու ավելի արագացող տեմպը, ժողովրդական տնտեսության մեջ նրա սոցիալիստական սեկտորի տեսակարար կշռի սիստեմատիկաբար բարձրանալը և նրա արդեն իսկ գերակշռող դերը ժողովրդական տնտեսության մեջ, լիովին ապահովում են աշխատավորների միջնավոր մասսաների լողունգի — «Հնդամյակը չորս տարում» —

իրականացումը և տանում են տարեցատարի  
դեպի բանվոր դասակարգի և գյուղացիության  
կյանքի նյութական և կուլտուրական մա-  
կարդակի սիստեմատիկ բարելավումը:

Հակառակ մեր յերկրին թշնամի անտեսա-  
գետների և քաղաքագետների բոլոր գուշա-  
կություններին ու մարգարեյություններին,  
հակառակ հին կարգերի չարանենք բեկոր-  
ների վասարարությանը, հնգամյա պլանը  
իրագործվում ե և պիտի իրագործվի: Յեզ  
պիտի իրագործվի հնգամյա պլանը վոչ թե  
հինգ, այլ չորս տարում: Հնգամյակը իր  
ժամկետին, այսինքն հինգ տարում իրա-  
գործելը մեզ համար արդեն խնդիր չե,  
վորովհետև այդ խնդիրը արդեն լուծված և  
գերալուծված ե, ինչպես յերեսում ե մեր բե-  
րած տվյալներից: Խնդիրը կայանում ե  
հնգամյակը ժամկետից առաջ, այսինքն չորս  
տարում իրագործելու մեջ: Մեր բերած  
տվյալները ցույց են տալիս, վոր մենք  
արդեն լուծում ենք այդ խնդիրը:

Սակայն մեզ լիովին չեն բավարարում  
մեր վերցրած աճման տեմպերը, այլ և մեր  
աշխատանքի վորակը: Դրանով ե բացատր-  
վում այն հանգամանքը, վոր մենք ինքներս  
մեզ անինա քննադատում ենք: Նրանք, ով-  
քեր այդ քննադատության հիման վրա յեզ-  
րակուցություններ են հանում հնգամյակի  
սնանկացման մասին, ընկնում են, ինչպես  
տեսնում եք, ծիծաղելի դրության մեջ:

ԳԱՀԱՆՁԵՑԵՔ  
ՄԵՐ ԳՐԱՅՈՒՑԱԿԸ, ՎՈՐ  
ՈՒՂԱՐԿՎՈՒՄ Ե ԶԲԻ.  
ԴԻՐԵԼ Մոսկա, Նիկոլյսկայա, 10.  
ЦЕНТРИЗДАТ.

2 Կոդ.

Цена 2 коп.

о. п.



---

В. КУЙБЫШЕВ  
Итоги двух лет  
пятилетки

---

На армянском языке

---

ЦЕНТРАЛЬНОЕ ИЗДАТЕЛЬСТВО НАРОДОВ СССР  
Москва, центр, Никольская, 10



ՀՀ Ազգային գրադարան



NL0210497

32.002